ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

9 դեկտեմբերի ուրբաթ 2022
2022տպագրության ԺԱ տարի

178
(2658)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 151

«Մենք զարմանալի պետություն ենք ընդհանրապես. Երեւանի քաղաքապետարանի տրանսպորտի վարչության պետին ծառայողական մեքենա ենք տալիս, ասում ենք՝ գնա գործի, արի տուն, մինչդեռ իր գործը մեր բոլորի, ժողովրդի համար գործից տուն գնալու պայման ապահովելն է: Էդ մարդու աշխատանքը երթուղայինի մեջ է, մի հատ բացատրեք՝ ինչի ենք իրեն ծառայողական մեքենա տալիս». սա հատված է ընդդիմադիր պատգամավոր Նիկոլ Փաշինյանի 2015թ.-ի մի ելույթից: Փաշինյանն այս երեւույթը անվանել էր «պադավատապետություն»: «Հայաստանի Հանրապետությունում պետք է 30-35 ծառայողական մեքենա լինի՝ հատուկ պահպանության ենթակա պաշտոնյաների համար»,- հավելել էր պատգամավորը: Հոկտեմբերի 19-ին պարզ դարձավ, որ կառավարությունը մտադիր է 200 ավտոմեքենա գնել ու թարմացնել պետական ավտոպարկը: Եվ չնայած տարիներ առաջ Նիկոլ Փաշինյանը շատ կտրուկ էր արտահայտվում, սակայն այս հարցում հեղափոխական քայլեր չեն արվել, եւ պետական ապարատում ավտոմեքենաների թիվը կրկին մեծ է: 2023 թվականի բյուջեի նախագծից պարզ է դառնում, որ կան գերատեսչություններ, որտեղ ծառայողական մեքենաների թիվն ավելանալու է: Եթե այս տարվա՝ 2022-ի դրությամբ ծառայողական մեքենաների թիվը պետական մարմիններում 933 է, ապա 2023-ին այն կավելանա 6-ով՝ կազմելով 939: Կրկին ականատես ենք լինում մի իրավիճակի, երբ ընդդիմադիր Նիկոլ Փաշինյանի խոսքերը հակադրվում են վարչապետ Նիկոլ Փաշինյանի խոսքերին, եւ չնայած նախկինում նա եւ նրա թիմակիցները դեմ էին արտահայտվում «պադավատներին», սակայն հիմա ոչ միայն չեն կրճատում ավտոպարկը, այլ ձգտում են բարձրարժեք եւ նոր մեքենաներով համալրել այն:

Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցությունը գնալով «Հայ հեղափոխական դաշնակցություն» ֆրակցիայի է վերածվում: Բանն այն է, որ ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի խորհրդարանական խմբակցությունում, որն ի սկզբանե քաղաքական դաշինք էր եւ տարբեր ուժեր ներկայացնող անհատներից էր կազմված, այժմ գերիշխող դիրք ունի ՀՅԴ-ն: Ըստ Ազգային ժողովի պաշտոնական կայքի՝ խմբակցությունում այս պահին ընդգրկված 25 պատգամավոր կա, եւս 4-ը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից արդեն մանդատ են ստացել. նրանք խորհրդարանի հերթական նիստի ժամանակ պատգամավորական երդում կտան ու կստանձնեն խորհրդարանականի պարտականությունները: Այսպիսով, «Հայաստան» խմբակցության 29 պատգամավորներից 14-ը դաշնակցականներ են, 13-ը, այդ թվում՝ Աղվան Վարդանյանը, անկուսակցական են, 1-ը՝ ասորի համայնքը ներկայացնող Ջենֆիա Միրզոեւան է՝ «Վերածնվող Հայաստան» կուսակցությունից: Հաշվի առնելով հանգամանքը, որ Վարդանյանը նախկին դաշնակցական է (իսկ դաշնակցականի նախկինը չի լինում), ապա ձայների հարաբերակցությունն այնպես է դասավորվում, որ «Դաշնակցությունը» խմբակցության ներսում գերիշխող է դառնում: «Ժողովուրդ» օրաթերթը, ի դեպ, նկատել է, որ «Հայաստան» խմբակցության, այսպես ասած, հին պատգամավորները եկող՝ նոր պատգամավորներին չգիտեն, չեն ճանաչում, նրանցից շատերն անգամ միմյանց երբեւէ չեն էլ տեսել:

ՀՀ պետական վերահսկողության ծառայությունը մտել է ՀՀ պաշտպանության նախարարություն՝ ստուգումների: «Ժողովուրդ» օրաթերթի իրազեկ աղբյուրները փոխանցում են, որ ՀՀ կառավարության ղեկավար Նիկոլ Փաշինյանը հստակ հրահանգներ է տվել Պետական վերահսկողության ծառայությանը՝ մանրազնին ուսումնասիրել կոնկրետ ոլորտներ: Տեղեկացանք, որ մի քանի ուղղություններով արդեն սկսվել են ստուգումները: ՊԿԾ աշխատակիցները քրքրում են Հայաստանի պաշտպանական գերատեսչության փաստաթղթերը, ուսումնասիրում տարբեր պայմանագրեր, փոխանցումներ, որպեսզի հասկանան՝ նոր նախարարի օրոք որքան են փոխվել գերատեսչության գործունեությունը, գործող ավանդույթները, եղած բարքերը: Հիշեցնենք՝ ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանի դեմ սեփական թիմում խարդավանքներ են հյուսում, երբեմն կեղծ ինֆորմացիաներ տրամադրում Նիկոլ Փաշինյանին: Լուրեր կան, որ Սուրեն Պապիկյանի դեմ արշավի մի մասը կազմակերպում եւ կառավարում է ՀՀ ԱԺ պաշտպանության եւ ազգային անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանը:

Շուրջ 1,5 ամիս է, ինչ Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Արուսյակ Ալեքսանյանը գտնվում է կալանքի տակ: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ կալանավորումից հետո ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննիչները մի քանի անգամ այցելել են «Աբովյան» քրեակատարողական հիմնարկ, որպեսզի հարցաքննեն դատավոր Արուսյակ Ալեքսանյանին, սակայն դատավորը միշտ հրաժարվել է ցուցմունք տալուց: Ասել է թե՝ քրեական վարույթով ուրշագրավ իրավիճակ է. մեղադրյալ դատավորը հրաժարվում է քրեական վարույթով որեւէ ցուցմունք տալ, քննիչներն էլ անիմաստ գնում-գալիս են կալանավայր: Հիշեցնենք, որ Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Արուսյակ Ալեքսանյանին պաշտոնեական լիազորությունները չարաշահելու մեղադրանք է առաջադրվել: Նույն գործի շրջանակներում հոկտեմբերի 21-ին կալանավորվել է նաեւ փաստաբան Էրիկ Ալեքսանյանը՝ դատավոր Ալեքսանյանին աջակցելու համար, եւ դատավորի օգնականը, որը հետագայում ազատ արձակվեց:

ՏԱՆՈՒՄ Է ՊԱՏԵՐԱԶՄԻ

ՊԵՏՔ Է ՄԻՇՏ ՊԱՏՐԱՍՏ ԼԻՆԵԼ

«Միացյալ Հայաստան» կուսակցության նախագահ Երվանդ Թարվերդյանը չի բացառում, որ Ադրբեջանի կողմից այս օրերին Արցախում իրականացվող սադրանքները կարող են ռազմական գործողությունների վերածվել, որովհետեւ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւից ամեն ինչ սպասելի է:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ասում է, որ, բարեբախտաբար, ռուս խաղաղապահների ակտիվ միջնորդությամբ հարցը կարգավորվում է:

Ադրբեջանցիները, ասում է, չեն էլ թաքցնում իրենց ցանկություններն ու նման միջոցներով են փորձում հասնել ցանկալի նպատակներին, կորզել թվացյալ խաղաղությունը:

Հիշեցնենք, որդ դեկտեմբերի 3-ին Շուշի-Քարին տակ խաչմերուկի հատվածում քաղաքացիական հագուստներով մի խումբ ադրբեջանցիներ բնապահպանական պատճառաբանությամբ փակել էին Ստեփանակերտ-Գորիս մայրուղին: Ընդհատվել էր Հայաստանի եւ Արցախի միջեւ ցամաքային կապը: Դրանից հետո հակասական հայտարարություններ տարածվեցին Լաչինի միջանցքում անցակետ տեղադրելու շուրջ: Ադրբեջանական հենակետ տեղադրելու մասին լուրերը տարածվեցին Լեռնային Ղարաբաղում տեղակայված ռուսաստանցի խաղաղապահների հրամանատար գեներալ-մայոր Անդրեյ Վոլկովի՝ Ադրբեջանի հանրային հեռուստատեսությամբ արված հայտարարությունից հետո:

Վոլկովն ասել էր, որ «Լեռնային Ղարաբաղը Հայաստանին կապող ճանապարհի վրա մինի մաքսակետ կտեղադրվի՝ հագեցած հատուկ սարքավորումներով»: Ավելի ուշ Արցախի ԱԱԾ-ն հերքեց Արցախը Հայաստանի հետ կապող միջանցքում ադրբեջանական հենակետ տեղադրելու մասին լուրերը: Ստեփանակերտը հայտնեց, որ հարցի շուրջ քննարկում է կազմակերպվել Վոլկովի հետ, որի ընթացքում «վերջինս հայտարարել է, որ միջանցքում հենակետ չի լինելու, այն ադրբեջանցիների կողմից չի վերահսկվելու, եւ միջանցքում՝ խաղաղապահների տեղակայման վայրերում, ադրբեջանցիներ չեն լինելու»:

Այս եւ այլ հարցերի շուրջ «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է «Միացյալ Հայաստան» կուսակցության նախագահ Երվանդ Թարվերդյանի հետ:

-Պարոն Թարվերդյան, ինչպե՞ս եք վերաբերվում Ադրբեջանի կողմից վերջին օրերին իրականացված սադրանքներին:

Արդյոք տեսնո՞ւմ եք հնարավորություն, որ այդ սադրանքները կարող են ռազմական գործողությունների վերածվել:

-Ադրբեջանական հերթական լկտիությունն է, եւ ագրեսիան չի իրականացվում միայն ռազմական ճանապարհով: Նրանք նաեւ փորձում են այդ թվացյալ խաղաղությունը խալխլել: Պետք է արժանին մատուցենք ռուս խաղաղապահներին, որ թե՛ առաջին, թե՛ երկրորդ միջադեպի դեպքում էլ հարցը կարողացան կարգավորել շատ արագ, առանց այլ միջադեպերի:

-Իսկ ի՞նչ եք կարծում, այդպիսի դեպքեր հաճախակի՞ կտեսնենք:

-Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը վաղուց իրականությունից կտրվել է, շեղվել է, աստղային տարերքի մեջ է այս օրերին: Ադրբեջանական զորավարժություններ են հիմա ընթանում, որը ինչ-որ տեղ Իրանի Իսլամական Հանրապետության դեմ է ուղղված: Այդ ամենի ֆոնին Ադրբեջանը չի կարողանում թաքցնել իրենց ագրեսիվ ցանկությունները, եւ, ինչու ոչ, այդպիսի միջոցներով նրանք ցանկանում են կորզել իրենց պատկերացրած եւ թվացյալ անկախությունը:

-Այսինքն՝ տեսնո՞ւմ եք հնարավորություն, որ այս գործողությունները կարող են վերաճել ռազմական ագրեսիայի:

-Այդ պատուհասից ամեն ինչ կարելի է սպասել: Մենք ոչ միայն հիմա, այլեւ միշտ պետք է պատրաստվենք եւ պատրաստ լինենք պատերազմի: Խոսքը միայն հիմիկվա մասին չէ, երբ գեոքաղաքական առումով եւս խառը իրավիճակ է: Պետք է հասկանալ, որ թուրք-ադրբեջանական տանդեմը մեր դեմ ամեն րոպե կարող է նոր ագրեսիվ գործողություն սկսել, եւ մենք պետք է միշտ պատրաստ լինենք այդ ամենին:

Զրուցեց ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԸ

ԼՈՒՐԵՐ

ՔՊ–Ն ՉՁԻՋԵՑ

Շիրակի մարզի Անի համայնքում նոր ընտրություններ կլինեն: Կառավարությունն իր երեկվա նիստում որոշեց վաղաժամկետ դադարեցնել Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու լիազորությունները եւ ավագանու արտահերթ ընտրություններ նշանակել:

Բանն այն է, որ Շիրակի մարզի Անի համայնքում ընտրություններից հետո որեւէ ուժ միայնակ իշխանություն ձեւավորելու համար բավարար ձայներ չէր ստացել: Երկու խմբակցությունների՝ «Քաղաքացիական պայմանագրի» ու «Հայկական երազանքի» բոյկոտի պատճառով նորընտիր ավագանու առաջին նիստը չի կայացել, եւ համայնքապետ չի ընտրվել:

«Ազգ-համայնք» դաշինքի թեկնածուն 18 տարի ղեկավարած Արտակ Գեւորգյանն էր, ում սեպտեմբերին կայացած ընտրություններում ընդամենը մեկ մանդատ չհերիքեց միայնակ իշխանություն ձեւավորելու համար:

Արդյունքում նորընտիր ավագանին չկարողացավ հավաքվել, ու նշանակեցին արտահերթ ընտրություններ: Փաստորեն, այս համայնքում եւս ՔՊ-ն հրաժարվեց իշխանությունը տալ ուրիշին:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԿՐԿԻՆ ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐ

Ազգային ժողովի «Քաղաքացիական խմբակցության» պատգամավոր, ՀՀ ԱԺ պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վլադիմիր Վարդանյանը նորից գործուղման է մեկնում: ArmLur.am-ը տեղեկացավ, որ նա դեկտեմբերի 10-13-ը Փարիզ է մեկնելու՝ մասնակցելու ԵԽԽՎ իրավական եւ մարդու իրավունքների հարցերի հանձնաժողովի նիստին:

ՔՊ-ական մեկ այլ պատգամավոր էլ՝ Ալեքսեյ Սանդիկովը, դեկտեմբերի 12-16-ը Մոսկվա կմեկնի: Նա՝ որպես փորձագետ եւ ժյուրիի անդամ, կմասնակցի «Բանավեճերի դաշնային լիգա» միջազգային երիտասարդական մրցույթին:

Նշենք, որ Վարդանյանի գործուղման հետ կապված ծախսերը՝ ճանապարհածախսը, օրապահիկը, ինչպես նաեւ գիշերավարձը, ՀՀ պետբյուջեի հաշվին են կատարվելու: Ինչ վերաբերում է Սանդիկովի գործուղմանը, ապա նշենք, որ գիշերավարձի եւ ճանապարհածախսի վճարումը կատարելու է հրավիրող կողմը:

Ս. ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

ԱՇԽԱՏԱՎԱՐՁ ԿԱՎԵԼԱՑՆԵՆ

Այսօր կգումարվի Ազգային ժողովի արտահերթ նիստ, որի օրակարգում ընդգրկված է նաեւ «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերի փաթեթը: Պետական պահպանության ծառայությունը կդառնա վարչապետին ենթակա մարմին եւ դուրս կբերվի Ազգային անվտանգության ծառայության մարմինների համակարգից: Այս պարագայում վարչապետին նոր լիազորություն է տրվելու, եւ ՊՊԾ պետ առաջադրելու իրավասություն հենց Նիկոլ Փաշինյանն է ունենալու: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ փոփոխության արդյունքում կբարձրանա նաեւ ՊՊԾ պետի եւ նրա տեղակալների աշխատավարձը, այսինքն՝Նիկոլ Փաշինյանն իր թիկնազորի եւ ղեկավարի աշխատավարձը բարձրացնում է: Բանն այն է, որ այժմ, երբ Պետական պահպանության ծառայությունը հանդիսանում է ԱԱԾ-ի մաս, պետը ստանում է Ազգային ժողովի պատգամավորին, մարզպետին, դատական ակտերի գլխավոր հարկադիր կատարողին, քրեակատարողական ծառայության պետին հավասար աշխատավարձ (661 հազար 400 դրամ՝ հարկերը ներառյալ): Նոր փոփոխություններով Պետական պահպանության ծառայության ղեկավարը ստանալու է ԱԱԾ տնօրենին, Ոստիկանության պետին, ԱԺ մշտական հանձնաժողովի նախագահին հավասար աշխատավարձ (793 հազար 680 դրամ՝ ներառյալ հարկերը). նրա աշխատավարձն ավելանալու է 132 հազար դրամով: ՊՊԾ պետի տեղակալն էլ կստանա այնքան գումար, որքան ստանում են Ոստիկանության պետի, ԱԱԾ տնօրենի տեղակալները (562 հազար 190 դրամ՝ներառյալ հարկերը): Այս փոփոխություններով վարչապետ Նիկոլ Փաշինյանը ոչ միայն իր լիազորություններն է ավելացնում եւս մեկով, այլ իր պահպանությունը բարձր մակարդակով կազմակերպելու համար բարձրացնում է թիկնապահների աշխատավարձը:

ԵՐԿՈՒ ՏԱՐԲԵՐԱԿ

«Մենք մեր ջանքերը կներդնենք, որ մինչեւ տարվերջ խաղաղության պայմանագիր ունենանք. հիմա ավելի մոտիկ լինելով տարեվերջին՝ դժվար է ասել, որ կստացվի»,- լրագրողների հետ ճեպազրույցի ժամանակ ասաց Անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանը:

Գրիգորյանը ասաց, որ դեռեւս վերջնական որոշում չկա, թե խաղաղության պայմանագրով է արդյոք ԼՂ հիմնահարցը լուծվելու, թե առանձին միջազգային մեխանիզմ են ստեղծելու:

Անդրադառնալով խաղաղության պայմանագրի տարբերակներին՝ Գրիգորյանը ասաց, որ կա երկու տարբերակ: «Մեկը առաջարկել է ՌԴ-ն, իսկ մյուսն այն տեքստն է, որը մեզ փոխանցել է Ադրբեջանը, եւ որի վրա մենք աշխատում ենք: Արեւմուտքը որեւէ տեքստ մեզ չի առաջարկել, Արեւմուտքը փորձել է միջավայր ստեղծել բանակցության համար»,- ասաց Արմեն Գրիգորյանը:

ՆՈՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վաղը՝ դեկտեմբերի 9-ին, կգումարվի Ազգային ժողովի արտահերթ նիստ, որի օրակարգում ընդգրկված է նաեւ «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերի փաթեթը: Այս օրենքների նախագծերի ընդունման դեպքում վարչապետն է որոշելու, թե արդյոք պաշտոնաթող նախագահներին եւ վարչապետերին պետական պահպանություն կտրամադրվի, թե ոչ: Փոփոխություն է կատարվելու Ազգային ժողովի նախագահին պետական պահպանություն տրամադրելու կարգում, եւ ամրագրվելու է, որ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի պաշտոնավարման ժամանակահատվածում պետական պահպանություն տրամադրվում է նաեւ նրա հետ համատեղ բնակվող, ինչպես նաեւ նրան ուղեկցող ընտանիքի անդամներին: Բացի այդ, ներկայումս օրենքի ուժով Հանրապետության նախագահի եւ վարչապետի առողջական վիճակին հետեւելու նպատակով առանձնացվում է անձնական բժիշկ, սակայն ԱԺ նախագահի համար՝ ոչ: Այս հանգամանքը եւս կփոփոխվի, եւ առաջարկվում է ամրագրել, որ ԱԺ նախագահի, նրա ընտանիքների անդամների (ամուսին, ծնող) համար եւս ապահովվում է Հայաստանի Հանրապետությունում գործող բժշկական կազմակերպություններում բժշկական օգնությունն ու սպասարկումը:

Մյուս փոփոխությամբ՝ Պետական պահպանության ծառայությունը կդառնա վարչապետին ենթակա մարմին եւ դուրս կբերվի Ազգային անվտանգության ծառայության մարմինների համակարգից:

ՈՎՔԵ՞Ր ԵՆ ՄԱՆԴԱՏ ՍՏԱՑԵԼ

Ազգային ժողովը չորս նոր պատգամավոր ունի. բոլորը «Հայաստան» դաշինքի անդամներ են: ArmLur.am-ը պարզել է՝ ովքեր են նրանք:

Այսպես, Արամ Վարդեւանյանի փոխարեն մանդատ ստացած Միեր Սահակյանը դաշնակցական է: Նա ԱԺ «Հայաստան» խմբակցության ղեկավար Սեյրան Օհանյանի՝ հասարակական հիմունքներով օգնականն է:

Վահե Հակոբյանի փոխարեն մանդատ է ստացել նորից դաշնակցական Արփինե Վարդանյանը: ArmLur.am-ի ունեցած տեղեկություններով՝ նա մասնավոր ընկերություններից մեկում է աշխատում՝ որպես ծրագրավորող:

Հռիփսիմե Ստամբուլյանի մանդատը Գեղարքունիքի մարզի Ջոլաքար համայնքի նախկին համայնքապետ Արման Ղազարյանին է անցել: Նա, նշենք, նախորդ տարի տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանի որոշմամբ է ազատվել պաշտոնից: «Հետք»-ի հրապարակումների հիման վրա, նշենք, Ղազարյանի մասով մի քանի քրեական գործեր էին հարուցվել:

Ելենա Կիրակոսյանի մանդատն էլ Իրինա Գասպարյանին կանցնի: Նա, ArmLur.am-ի տեղեկություններով, Հայաստանի ասորական կազմակերպությունների «Խայադթա» ֆեդերացիայի նախագահն է:

ԱՐՁԱԳԱՆՔ

Թ. ԹՈՎՄԱՍՅԱՆԸ ՊԱՏԱՍԽԱՆԵԼ Է ԱԴՐԲԵՋԱՆԻՆ

Պատերազմական հանցագործություններով հայտնի Ադրբեջանում, փաստորեն, գոյություն ունի Մարդու իրավունքների հարցերով հանձնաժողով. այս մասին հայտարարություն է տարածել ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը:

Լրատվական կայքերում տարածվում է Ադրբեջանի խորհրդարանի՝ մարդու իրավունքներով զբաղվող ինչ-որ հանձնաժողովի նախագահ Ջ. Օրուջայի հայտարարությունն առ այն, որ Ադրբեջանը պատերազմով տիրեց Շուշիին, խաղաղությամբ էլ կտիրի Երեւանին:

Միջազգային գործընկերներիս ուշադրությունն եմ հրավիրում այն հանգամանքի վրա, որ մարդու իրավունքներով զբաղվող Ադրբեջանի այս պաշտոնյան, ըստ էության, անտեսում է մարդու անօտարելի, համընդհանուր իրավունքների պաշտպանությանը վերաբերող այն առանցքային դրույթները, որոնցով պետությունները պարտավորված են առաջնորդվել իրենց միջազգային հարաբերություններում: Մասնավորապես. այս հայտարարությամբ Ադրբեջանի Մարդու իրավունքների հանձնաժողովի նախագահը, փաստորեն, ողջունում է Ադրբեջանի վարքագիծն առ այն, որ Ադրբեջանը, խախտելով ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում ընթացող Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման բանակցությունների հիմքում դրված, ինչպես նաեւ ՄԱԿ-ի կանոնադրությամբ, ԵԱՀԿ Հելսինկյան եզրափակիչ ակտում ամրագրված՝ ուժի գործադրումից կամ դրա սպառնալիքից ձեռնպահ մնալու, վեճերի խաղաղ կարգավորման հիմնարար սկզբունքները, 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծել է լայնամասշտաբ ռազմական ագրեսիա Արցախի դեմ, կիրառել ընդհանուր միջազգային իրավունքով արգելված զինատեսակներ, թիրախավորել Արցախի քաղաքացիական բնակչությանը եւ ենթակառուցվածքները:

Իսկ Ադրբեջանի պատերազմական հանցագործությունների հետեւանքով հազարավոր մարդկային կյանքերի կորուստը ցավալի է, որ որեւէ կերպ չի հետաքրքրում մարդու իրավունքներով զբաղվող այս պաշտոնյային:

Ջ. Օրուջան, հավատարիմ Ադրբեջանի նվաճողական քաղաքականության տրամաբանությանը, խոսում է միջազգային իրավունքի սուբյեկտի՝ Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքին տիրանալու մասին, որը միջազգային իրավունքի աղաղակող խախտում է:

Ինչ վերաբերում է վերջինիս հիշատակած խաղաղությանը, ընդգծում եմ՝ Ձեր խաղաղությունը՝

- ամենօրյա հրաձգային, ականանետային կրակոցներն են,
- հայ խաղաղ բնակչության, զինծառայողների սպանություններն ու վիրավորումներն են, քաղաքացիական բնակչության ուղղակի թիրախավորումը,
- հայ ռազմագերիների եւ քաղաքացիական անձանց պատանդառությունը, գերության մեջ հայտնված հայ զինծառայողների ու քաղաքացիական անձանց արտադատական սպանությունները,
- բռնի անհետացումը,
- քաղաքացիական անձանց, այդ թվում՝ կանանց նկատմամբ խոշտանգումները, դաժան եւ անմարդկային վերաբերմունքը,
- հայ ժողովրդի նկատմամբ էթնիկ ատելությունը, նոր ցեղասպանության իրագործման պետական քաղաքականության կյանքի կոչումը,
- Արցախի շրջափակումն ու աշխարհի հետ կապի արգելափակումը,
- երեխաներին սննդի մատակարարումների արգելափակումը, նրանց կյանքի իրավունքի ոտնահարումները,
- վիրավորներին անհրաժեշտ բժշկական օգնության արգելափակումը,
- առհասարակ անարգանքը միջազգային հումանիտար իրավունքի նկատմամբ…

Թերեւս այս պաշտոնյային հիշեցնեմ՝ Ձեր խաղաղության օրակարգն այնքան կեղծ է, որ Արդարադատության միջազգային դատարանը ձեզ պարտավորեցրել է՝

- «Պաշտպանել բռնությունից եւ մարմնական վնասվածքներից բոլոր այն անձանց, որոնք գերեվարվել են՝ 2020թ. զինված հակամարտությամբ պայմանավորված, եւ դեռեւս շարունակում են մնալ գերեվարված, եւ ապահովել նրանց անվտանգությունն ու օրենքի առջեւ հավասարությունը»,
- «Ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ կանխելու ազգությամբ եւ էթնիկ հայերին թիրախավորող ռասայական ատելության եւ խտրականության հրահրումը եւ խթանումը՝ ներառյալ Ադրբեջանի պաշտոնյաների եւ պետական հաստատությունների կողմից»…

Միաժամանակ կարող եք ընդունել ի գիտություն, որ «Ռասայական խտրականության բոլոր ձեւերի վերացման մասին» կոնվենցիայով Ադրբեջանի կողմից ստանձնած պարտավորությունների կատարման վերաբերյալ ՄԱԿ-ի Ռասայական խտրականության վերացման կոմիտեի եզրափակիչ դիտարկումներում տեղ են գտել 2020թ. Արցախի դեմ ագրեսիայի ընթացքում եւ դրանից հետո Ադրբեջանի կողմից իրականացվող մարդու իրավունքների կոպիտ խախտումների դեպքերը:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑ

Պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանի գլխավորած պատվիրակությունն աշխատանքային այցով մեկնել է Ռուսաստանի Դաշնություն: Այս մասին հայտնել է ՊՆ մամուլի քարտուղար Արամ Թորոսյանը:

ՀԱՆԴԻՊՈՒՄ

Ֆրանսիայի Հանրապետությունում գտնվող Արցախի Հանրապետության նախագահ Արայիկ Հարությունյանի գլխավորած պատվիրակությունը հանդիպել է Փարիզի քաղաքապետ Անն Իդալգոյի հետ: Հանդիպմանը քննարկվել են Արցախ-Ֆրանսիա կապերի զարգացմանը, ադրբեջանաղարաբաղյան հակամարտության կարգավորմանը վերաբերող տարբեր հարցեր: Արայիկ Հարությունյանը բարձր է գնահատել Անն Իդալգոի ջանքերը՝ ուղղված Արցախի ժողովրդի իրավունքների պաշտպանությանը, անկախության միջազգային ճանաչման համար պայքարին սատարմանը, ինչպես նաեւ Ադրբեջանի կողմից բռնազավթված տարածքներում Արցախի հոգեւոր-մշակութային ժառանգության պաշտպանությանը: Նախագահը նաեւ շնորհակալություն է հայտնել Փարիզի քաղաքային խորհրդի անդամներին Արցախի Հանրապետության անկախության ճանաչման բանաձեւի օգտին քվեարկելու համար:

Փարիզի քաղաքապետը վստահեցրել է, որ Փարիզը միշտ կլինի Արցախի եւ նրա ժողովրդի կողքին՝ պաշտպանելով նրա ինքնորոշման եւ խաղաղ ապրելու իրավունքները:

ԺԱՄԱՆԵԼՈՒ Է ԵՐԵՎԱՆ

Հարավային Կովկասում Եվրամիության հատուկ ներկայացուցիչ Տոյվո Կլաարը հայտնել է, որ մեկնում է Երեւան: Նա այս մասին գրել է իր սոցիալական միկրոբլոգում: «Բարի առավոտ:

Այսօր փորձարկում ենք Վիեննա-Երեւան ուղիղ չվերթը: Կեսօրին ակնկալում եմ բովանդակալից հանդիպումներ»,- գրել է ԵՄ պաշտոնյան՝ կից հրապարակելով օդանավում արված լուսանկար:

ՀԱՐՁԱԿՈՒՄ՝ ՏԱՆ ՎՐԱ

ԴԵՌ ՉԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ

Արդեն երեք տարի է, ինչ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը քննում է ՀՀ վճռաբեկ դատարանի նախկին նախագահ Արման Մկրտումյանի տան հարձակման քրեական գործը, եւ ինչպես նկատում ենք, գործով նիստերը չեն կայանում, քանի որ դատախազ Վ. Սարգսյանը տեղեկացրել է, որ նշանակվել է Հակակոռուպցիոն դատարանի դատավոր, եւ նշված դատական նիստին այլ դատախազ չի ներկայացել, ինչպես նաեւ պաշտպանը առողջական խնդիր ունի եւ չի ներկայացել, իսկ, ահա, վերջին նիստը չի կայացել, քանի որ հարձակման գործով կալանավորված անձանցից մեկը առողջական խնդիր ունի: Դատարան դիմում է ներկայացրել «ՀՀ ԱՆ բեռնատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի՝ Վարդաշենի բժշկական ստորաբաժանումից ստացվել է տեղեկանք այն մասին, որ Մ. Մկրտչյանը ներկա առողջական վիճակով չի կարող մասնակցել դատական նիստին:

Հիշեցնենք, որ 2019 թվականին ՀՀ վճռաբեկ դատարանի նախկին նախագահ Արման Մկրտումյանի տան հարձակման կապակցությամբ հարուցված քրեական գործն ուղարկվել է դատարան: Նկատենք, որ իրավապահներին չի հաջողվել գործը մինչեւ վերջ բացահայտել. դեռեւս հայտնի չէ անձը, ում մեքենայով ավազակային հարձակման համար մեղադրվողները գնացել են Մկրտումյանի՝ Զորաղբյուր գյուղի տուն:

Ըստ մեղադրական եզրակացության՝ Գագիկ Դանոյանը նախնական համաձայնության է եկել ընկերոջ՝ Հովհաննես Ռիժենկոյի, դստեր ամուսնու՝ Մայիս Մկրտչյանի եւ գործով ինքնությունը չպարզած անձի հետ:

2018 թվականի օգոստոսի 28-ին՝ ժամը 22:00-ի սահմաններում, նրանք BMW X5 մակնիշի մեքենայով գնացել են Արման Մկրտումյանին պատկանող, Կոտայքի մարզի Զորաղբյուր գյուղում գտնվող առանձնատուն: Գագիկ Դանոյանը, Հովհաննես Ռիժենկոն եւ Մայիս Մկրտչյանը դիմակներով մտել են Մկրտումյանի տուն, իսկ ինքնությունը չպարզված անձը սպասել է ավտոմեքենայում: Հայր ու որդի Մկրտումյանները տեսանկարահանող սարքերի միջոցով տեսել են տուն մտնող անձանց եւ դուրս են եկել բակ:

Գագիկ Դանոյանը, Հովհաննես Ռիժենկոն եւ Մայիս Մկրտչյանը հարձակում են գործել Մկրտումյանների վրա. Հովհաննես Ռիժենկոն մարտական դիրքի բերված «ԱԿՄ» տեսակի ինքնաձիգի փողն ուղղել է Արման եւ Գոռ Մկրտումյանների ուղղությամբ, սակայն Գոռ Մկրտումյանը գազային ատրճանակից կրակել է Հովհաննես Ռիժենկոյին դեմքին, ինչից հետո Արման եւ Գոռ Մկրտումյանների եւ Հովհաննես Ռիժենկոյի միջեւ ծեծկռտուք է սկսվել:

Ի վերջո, Արման եւ Գոռ Մկրտումյաններին հաջողվել է վնասազերծել Հովհաննես Ռիժենկոյին եւ վերցնել նրա ձեռքից ինքնաձիգը, ինչը տեսնելով՝ Գագիկ Դանոյանը եւ Մայիս Մկրտչյանը փախել են իրենց սպասող BMW X5 մակնիշի ավտոմեքենայով, իսկ Ռիժենկոյին Մկրտումյանները հանձնել են իրավապահներին: Հայտնաբերված երեք անձինք կալանավորված են, բայց, փաստորեն, այս գործով եւս մեկը դեռ չի հայտնաբերվել:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՄԵՂԱԴՐԱՆՔ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔԸ

ՀՀ քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչության Սեւանի քննչական բաժնում քննվող քրեական վարույթի շրջանակներում իրականացված քննչական եւ վարութային գործողությունների արդյունքում պարզվել են Գեղարքունիքի մարզի 25-ամյա բնակչուհուն ինքնասպանության փորձի հասցնելու դեպքի հանգամանքները:

ՔԿ-ից հայտնում են, որ 2022թ. նոյեմբերի 21-ին ՀՀ քրեական օրենսգրքի 162-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի հատկանիշներով նախաձեռնված վարույթի քննությամբ պարզվել է, որ 25-ամյա կինը շուրջ երեք տարի փաստացի ամուսնական կապի մեջ է գտնվել Սեւան քաղաքի 27-ամյա բնակչի հետ: Վերջինս, համատեղ կյանքի ընթացքում կնոջ արժանապատվության եւ հոգեկան վիճակի նկատմամբ ցինիկ վերաբերմունք դրսեւորելով, պարբերաբար ծեծի է ենթարկել նրան, նրա եւ մերձավորների հասցեին հայհոյանքներ հնչեցրել:

2022 թվականի նոյեմբերի 21-ին 27-ամյա տղամարդը հերթական անգամ հարվածել է կնոջը, վիրավորել նրա արժանապատվությունը, սպառնացել: Տղամարդու կողմից պարբերաբար դրսեւորված դաժան եւ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից դրդված, գտնվելով հոգեկան ծանր ապրումների մեջ, անկարող լինելով տանել առկա վիճակը՝ հետագայում նորից իր նկատմամբ ամուսնու կողմից նման վերաբերմունքից ազատվելու համար, հաշվի չառնելով նույնիսկ իր խնամքին գտնվող մանկահասակ երեխային, նույն օրը՝ ժամը 21:00-ի սահմաններում, 25-ամյա կինը գնացել է Երեւան-Սեւան-Իջեւան ավտոճանապարհի 62-րդ կմ հատված եւ ինքնասպանություն գործելու նպատակով այնտեղ կառուցված հետիոտնային վերգետնյա անցումից իրեն ցած է նետել եւ ստացել մարմնական վնասվածքներ: Ձեռնարկված նախաքննության ընթացքում պարզվել է նաեւ, որ 27-ամյա տղամարդու կողմից 25-ամյա կնոջը պարբերաբար ծեծի ենթարկելու, վերջինիս մերձավորների հասցեին սեռական բնույթի հայհոյանքներ հնչեցնելու ժամանակ, գիտակցելով, որ որդու գործողությունները ֆիզիկական եւ հոգեկան տառապանք են պատճառում 25-ամյա կնոջը, որդուն սաստելու փոխարեն, մայրը նորմալ է ընդունել այդ հանգամանքը՝ ողջունելով որդու կողմից բռնության գործադրումը, այդպիսով դրսեւորել դաժան եւ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք:

Հարուցված հանրային քրեական հետապնդման հիման վրա՝ վարույթն իրականացնող մարմնի կողմից 27-ամյա տղամարդուն եւ նրա մորը մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 162-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված արարքի հատկանիշներով: Նրանց նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չբացակայելու արգելքը: Նախաքննությունը շարունակվում է:

ԼՈՒՐԵՐ

ՔՆՆԻՉԸ ՊԱՐՏՎԵՑ

ArmLur.am-ը հայտնել էր, որ ՀՀ ՔԿ Սեւանի քննչական բաժնի քննիչ Անդրանիկ Անտոնյանը դիմել է ՀՀ վարչական դատարան՝ դատի տալով ՀՀ քննչական կոմիտեին:

Ինչպես հայտնի է, անցած տարի աշխատանքից ազատվել էր ՀՀ ՔԿ Սեւանի քննչական բաժնի քննիչ Անդրանիկ Անտոնյանը: Վերջինիս ազատել են «Ֆեյսբուք» սոցիալական ցանցում իշխանությունների դեմ արտահայտված անձանց գրառումները կիսվելու համար: ՀՀ ՔԿ Սեւանի քննչական բաժնի քննիչ Անդրանիկ Անտոնյանի ազատման գործով զարգացումներ են տեղի ունենում:

ArmLur.am-ի հետ զրույցում փաստաբան Հովսեփ Սարգսյանը հայտնել էր, որ ինքը տեղեկություններ ունի, թե քննիչների գործողությունները մոնիթորինգի են ենթարկում, ասել է թե՝ ուրվականներ են փնտրում, որ «քննիչ Անդոյի» ճակատագրին արժանացնեն:

Եվ, ահա, մեզ հայտնի դարձավ, որ դատարանը մերժել է քննիչը հայցը: Ի դեպ, քննիչը պայմանագրային զինծառայող է դարձել եւ ծառայում է բանակում:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՄՈԼՈՐԵՑՐԵԼ ԵՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆԸ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի որոշմամբ՝ «Յանդեքս Տաքսի էյէմ» եւ «Յանդեքս Սնունդ էյէմ» ՍՊԸ-ների նկատմամբ հասարակության մոլորեցման դրսեւորմամբ, անբարեխիղճ մրցակցության առերեւույթ հատկանիշներով, հարուցվել է վարույթ:

Մասնավորապես՝ հանձնաժողովը հաշվի է առել, որ

- https://eats.yandex.com կայքում առկա է «Բոլոր առաքումները՝ անվճար» բովանդակությամբ հրապարակում, մինչդեռ անվճար առաքումն իրականացվել է մինչեւ 2022 թվականի նոյեմբերի 15-ը, որի մասին նշվում է միայն ֆեյսբուքյան էջում,
- https://eats.yandex.com կայքում առկա է «Բոլոր առաքումները՝ անվճար» բովանդակությամբ հրապարակում, մինչդեռ անվճար առաքման համար առկա է էական պայման՝ 1 500 ՀՀ դրամ եւ ավել գնում կատարելը, որի մասին չի նշվում,
- Yandex Eats: food delivery եւ «YandexGo» բջջային հավելվածներում հրապարակվել է «1350 Դ զեղչ՝ Յանդեքս Իթսից» բովանդակությամբ ակցիա, մինչդեռ չեն նշվել ակցիայից օգտվելու էական պայմանները, այն է՝ պետք է մուտքագրել պրոմո կոդ, որն է պրոմո կոդը, ինչպես նաեւ տվյալ զեղչից հնարավոր է օգտվել միայն մեկ անգամ՝ առաջին պատվերի շրջանակներում,
- Yandex Eats: food delivery եւ «YandexGo» բջջային հավելվածներում հրապարակվել է «Բուրգերից մինչեւ բուրիտո,-10%» բովանդակությամբ գովազդ, սակայն պատվիրելիս 10%-ի զեղչ չի կիրառվում:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ դեկտեմբերի 7-ից 8-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 56 դեպք, որոնցից 2-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՃՈԽ ԿԵՐՊՈՎ ԻՆՔՆԱՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ

Տավուշի մարզպետարանից հայտնում են, որ մարզի հանրակրթական 76 դպրոցների շենքերից 10-ն ունի հիմնանորոգման, 32-ը՝ վերանորոգման (դասասենյակներ, միջանցքներ, մարզադահլիճներ) կարիք: Պետական դպրոցների շենքերը նորոգելու համար պետական բյուջեից գումարներ չեն հատկացվում, սակայն Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանն իրեն եւ մարզպետարանի պաշտոնյաներին պետական բյուջեից առատորեն պարգեւատրում է, հայտնի չէ, թե որ նվաճումների համար: Տավուշի մարզպետարանի թվով 76 աշխատակից 2022 թվականի ՀՀ պետական բյուջեով նախատեսված 59,5 միլիոն դրամ պարգեւատրման գումարից 2022թ. նոյեմբերի 25-ի դրությամբ ստացել է 49,5 միլիոն դրամի պարգեւատրում:

ՕՂԻ ԵՆ ԹՈՐԵԼ

Բերդ համայնքի սահմանամերձ Չինարի բնակավայրի վարչական ղեկավար Սամվել Սաղոյանը հայտնեց, որ այս տարի Չինարիից 300 տոննա կիլոգրամը միջինը 300 դրամով թուզ է արտահանվել: Նրա խոսքերով՝ Բերդ համայնքի Չինարի եւ Այգեձոր գյուղերում այժմ ընդհանուր մոտ 50 տոննա կորոլյոկի (արքայանարնջի) բերք կա, սակայն անգամ կիլոգրամը 200 դրամով գնորդ չկա: Չինարիի վարչական ղեկավարն ասաց, որ սահմանամերձ գյուղի բնակիչները ստիպված կորոլյոկից օղի են թորելու՝ խմեն: Աճեցրած կորոլյոկի իրացման լուրջ խնդիր կա նաեւ Իջեւան խոշորացված համայնքի սահմանամերձ Բերքաբեր գյուղում:

ԱՆԿԱՏԱՐ ՄՈՒՐԱՔ

Տավուշի մարզպետարանի պաշտոնյան իր անունը չհրապարակելու պայմանով հայտնեց, որ վարչապետ Նիկոլ Փաշինյանի դասընկեր, նրա հարսանիքի քավոր, Նիկոլ Փաշինյանի որոշմամբ 2019թ. սեպտեմբերի 12-ին Իջեւան համայնքի ղեկավարի պաշտոնակատար, 2021թ. ապրիի 8-ին Տավուշի մարզպետ նշանակված Հայկ Ղալումյանը ցանկանում է դառնալ Հայաստանի ՊԵԿ նախագահ, սակայն վարչապետ Նիկոլ Փաշինյանը չի կարողանում քավորի ցանկությունն իրականություն դարձնել, քանի որ ՊԵԿ նախագահ Ռուստամ Բադասյանը Հայաստանում «Սորոսի գրասենյակի» ղեկավար Լարիսա Մինասյանի կադրն է. Նիկոլ Փաշինյանը չի ցանկանում վերջինիս հետ հարաբերություններ փչացնել:

ՀԱՆՁՆՎԵԼ Է ՈՍՏԻԿԱՆՆԵՐԻՆ

Բերդ խոշորացված համայնքի Այգեձոր գյուղի բնակիչ, 1995թ. ծնված Նվեր Կիզողյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, չունենալով տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք եւ գտնվելով ոչ սթափ վիճակում, 2022 թ. սեպտեմբերի 5-ին՝ ժամը 17:30-ի սահմաններում, իրեն պատկանող «Վազ 2107» մակնիշի ավտոմեքենայով մուտք է գործել ոստիկանության Տավուշի բաժնի տարածք, որտեղ էլ հայտնաբերվել է ոստիկանության Տավուշի բաժնի ծառայողների կողմից: Նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 344 հոդվածի 2-րդ մասով, նրա նկատմամբ խափանման միջոց է ընտրվել բացակայելու արգելքը: Ն. Կիզողյանի դատավարությունն ընթանում է Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանում:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԸՆԴՈՒՆՎԵՑ

ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԾՐԱԳԻՐ ԿԳՈՐԾԻ

Դեկտեմբերի 7-ին Ազգային ժողովը երկրորդ ընթերցմամբ եւ ամբողջությամբ միաձայն ընդունել է «Պաշտպան հայրենյաց» ծրագիրը: Ըստ այդմ, «Ես եմ» ծրագրին այսուհետ կփոխարինի նոր՝ «Պաշտպան հայրենյաց» ծրագիրը:

«Պաշտպան հայրենյաց» ծրագիրը նախատեսում է շարքային եւ սպայական կազմերի պարտադիր զինվորական ծառայության առաջին 6 ամիսը լրանալուց հետո, Կառավարության սահմանված կարգով, պայմանագրային զինվորական ծառայության անցնելու հնարավորություն՝ ծառայության ժամկետը սահմանելով 5 տարի:

Պայմանագրի ժամկետը լրանալու կամ առողջական վիճակի պատճառով ոչ պիտանի ճանաչվելու հիմքով ծառայությունից ժամկետից շուտ արձակվելիս նրանց համար սահմանել է պատվովճար ստանալու իրավունք: Պատվովճարի չափը 5 միլիոն դրամ է, որը շահառուն ազատորեն կարող է տնօրինել:

«Պաշտպան հայրենյաց» ծրագրով 18-ամյա զինծառայողը 6 ամիս ծառայելուց հետո կարող է 5 տարով դառնալ պայմանագրային զինծառայող, ստանալ մինչեւ 380 հազար դրամ աշխատավարձ եւ օգտվել պայմանագրային զինծառայողի բոլոր արտոնություններից:

Դեկտեմբերի 7-ին Ազգային ժողովը երկրորդ ընթերցմամբ եւ ամբողջությամբ ընդունել է նաեւ պայմանագրային զինծառայողների կամավոր ատեստավորման համակարգի ներդրման նախագիծը, որին կողմ է քվեարկել 65 պատգամավոր, ձեռնպահ՝ 26, դեմ՝ 0:

Նախագծերի փաթեթով առաջարկվում է պայմանագրային զինվորական ծառայության գրավչությունն ու շահագրգռվածությունը բարձրացնելու նպատակով անմիջականորեն մարտական խնդիրների իրականացման, պլանավորման կամ վերահսկման գործառույթներ ունեցող պաշտոններ զբաղեցնող պայմանագրային զինվորական ծառայության սպայական, ենթասպայական եւ շարքային կազմերի զինծառայողների համար սահմանել հավելավճար, եւ դրա հաշվարկումը պայմանավորել այդ զինծառայողների կողմից ատեստավորում անցնելու հանգամանքով: Ատեստավորմանը մարտական խնդիրների իրականացման, պլանավորման կամ վերահսկման գործառույթներ ունեցող պաշտոններ զբաղեցնող պայմանագրային զինծառայողները մասնակցելու են կամավոր:

Նախքան քվեարկությունը պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը հայտարարեց՝ ներդնում են շարքային եւ սպայական կազմերի պարտադիր զինվորական ծառայությունից պայմանագրային զինվորական ծառայության անցման նոր համարագ, որը զինվորական ծառայության գրավչությունն ու շահագրգռվածությունը բարձրացնելու նպատակ ունի:

«Գոյություն ունեցող համակարգն այսօր չի բավարարում մեր երկրի առջեւ ծառացած մարտահրավերները, եւ մենք սահմանում ենք ավելի բարձր նշաձող. պայմանագրայինը պետք է ունենա ավելի բարձր պատրաստվածություն եւ ավելի բարձր կարողություն, եւ պրոֆեսիոնալ բանակը ենթադրում է, որ մեր բանակի զինվորները պետք է ունենան ավելի բարձր ստանդարտներ եւ ավելի բարձր սոցիալական ապահովություն», - իր եզրափակիչ ելույթում ասաց նախարար Սուրեն Պապիկյանը:

Այս նոր ծրագիրը ներդնելով՝ կառավարությունը դադարեցնում է 2018 թվականից գործող «Ես եմ» ծրագիրը, որն ընդունվել էր նախկին իշխանությունների օրոք:

Պաշտպանության հանձնաժողովի փոխնախագահ, պատգամավոր Արմեն Խաչատրյանը հավելեց՝ նախագծով առաջին համարձակ քայլն է կատարվում պրոֆեսիոնալ բանակի ստեղծման ուղղությամբ: Պրոֆեսիոնալ բանակի անցման խնդիրը նոր գաղափար չէ, հայտարարեց պաշտպանության նախկին նախարար, ընդդիմադիր «Հայաստան» խմբակցության ղեկավար Սեյրան Օհանյանը՝ շեշտելով՝ կողմ են քվեարկելու նախագծին: «Համաձայն չեմ, երբ որ Զինված ուժերի համալրման խնդիրներում այս կամ այն անուններ ենք դնում՝ «Ես եմ», «Դու ես», «Պաշտպան հայրենյաց». դա Զինված ուժերի համալրման ռազմավարության մեջ ժամկետային ծառայությունից պայմանագրային ծառայության անցնելու կետը պետք է լինի: Այս կետին, այս օրենսդրական փոփոխությանը «Հայաստան» դաշինքը կողմ կքվեարկի», - ասաց խմբակցության ղեկավար Օհանյանը:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՎԵՐՋԻՆ ՏԱՐԻՆԵՐ

4855 ՇԱՀԱՌՈՒԻ ՀԱՏՈՒՑՈՒՄ Է ՏՐԱՄԱԴՐՎԵԼ

Զինծառայողների ապահովագրության հիմնադրամը 2017թ. տարեսկզբից մինչեւ 2022թ. 3-րդ եռամսյակը հաստատում է տրամադրել 4855 շահառուների՝ զոհվածների, անհետ կորածների ընտանիքների եւ հաշմանդամության ապահովագրության իրավունք ունեցողների:

ArmLur.am-ը այս մասին տեղեկացավ Զինծառայողների ապահովագրության հիմնադրամի հրապարակած հաշվետվություններից:

2022 թվականի սկզբից մինչեւ սեպտեմբերի վերջ գրանցվել է 176 նոր դեպք՝ 62 զոհված, 96 անհետ կորած, 4 առաջին կարգի եւ 14 երկրորդ կարգի հաշմանդամներ:

Զոհվածների, անհետ կորածների ընտանիքներին եւ հաշմանդամության ապահովագրության իրավունք ունեցողներին 2022թ. 3-րդ եռամսյակում տրամադրվել է 11.1 միլիարդ ՀՀ դրամի հատուցում, իսկ 2017-ից մինչեւ 2022թ. 3-րդ եռամսյակ՝ 65.3 միլիարդ ՀՀ դրամի հատուցում:

Ըստ հաշվետվության՝ 2017թ. մինչեւ 2022թ. 3-րդ եռամսյակը նվիրաբերությունները կազմել են շուրջ 9 միլիարդ ՀՀ դրամ:

2017-ից մինչեւ 2022թ. 3-րդ եռամսյակը նվիրաբերությունների ընդհանուր թիվը կազմում է գրեթե 80 հազար, իսկ միջին նվիրաբերության գումարը՝ 112,000 ՀՀ դրամ:

Ամենաշատ նվիրաբերություններ կատարվել են 2020թ. պատերազմի ժամանակ եւ դրանից հետո: Տարեսկզբից մինչեւ 2021թ. 3-րդ եռամսյակն արձանագրված ցուցանիշների համեմատ՝ ընթացիկ նվիրաբերությունները նվազել են 61%-ով: Նվիրաբերությունների թիվը եւ միջին չափը նույնպես նվազել են՝ համապատասխանաբար 53%-ով եւ 17%-ով: Դա բացատրվում է հետպատերազմյան իրավիճակով, քանի որ պատերազմի ժամանակ նվիրաբերությունները սովորաբար կտրուկ աճ են ցույց տալիս, ինչն արտահայտվել է 2020թ. արդյունքներում:

Զինծառայողների ապահովագրության հիմնադրամը շահույթ չհետապնդող, հատուկ օրենսդրությամբ կարգավորվող հի?ադրամ է, որը հիմնադրվել է 2017թ. ՀՀ կենտրոնական բանկի կողմից հայրենիքը եւ նրա սահմանները պաշտպանելիս զոհված, անհայտ բացակայող ճանաչված, 1-ին եւ 2-րդ խմբի զինհաշմանդամություն ձեռք բերած զինծառայողներին եւ նրանց ընտանիքներին կայուն, արդար ֆինանսական հատուցում տրամադրելու նպատակով: ԶԱՀ-ը կառավարվում է անկախ, արհեստավարժ եւ բարձր հեղինակություն վայելող հոգաբարձուների խորհրդի կողմից:

ԶԱՀ-ի միջոցները գոյանում են Հայաստանում ու Արցախում եկամուտ ստացող անձանց ամսական պարտադիր վճարներից՝ մինչ օրս մոտ 84.8 միլիարդ ՀՀ դրամ, կամավոր նվիրաբերություններից՝ մինչ օրս մոտ 11.8 միլիարդ ՀՀ դրամ, որոնք ստացվում են աշխարհասփյուռ հայությունից, ինչպես նաեւ ԶԱՀ-ի ակտիվների կառավարումից ստացված եկամտից՝ շուրջ 9 միլիարդ ՀՀ դրամ:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 13 ճՏՊ. 1 մարդ զոհվել է, 14-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

ՀՈՎԱՆԱՎՈՐԸ «ԱԿԲԱ»-Ն Է

Հայաստանում ռոբոտաշինության, ծրագրավորման, էլեկտրոնիկայի եւ դիզայնի նկատմամբ հետաքրքրության զարգացման, ինչպես նաեւ ճարտարագիտական մասնագիտությունների նկատմամբ հետաքրքրությունը մեծացնելու նպատակով Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միությունը դեկտեմբերի 11-ին Հայաստանում կանցկացնի «ԱրմՌոբոտիքս 2022» ինքնակառավարվող ռոբոտների Հայաստանի 14-րդ առաջնությունը:

Առաջնության անցկացման հովանավորը նաեւ «Ակբա» բանկն է:

Մրցույթի շրջանակում ռոբոտաշինության եւ ծրագրավորման իրենց հմտությունները, ունակություններն ու գիտելիքները կցուցադրեն 3 տարբեր խմբերի բաժանված թիմերը՝ դպրոցահասակների թիմերը (10-17տ.), սկսնակ ընկերությունների թիմերն ու մասնագիտացած ընկերությունները:

Թիմերի ստեղծած ռոբոտները մրցույթի ընթացքում կլուծեն ագրոոլորտին վերաբերող խնդիրներ՝ բերքի հավաքումից մինչեւ սերմերի տնկում, այգիների ու բույսերի ոռոգումից մինչեւ կենդանիների կերակրում: Ռոբոտները նաեւ կկատարեն տնտեսության մշտադիտարկում, ստացվող տվյալների վերլուծություն:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

ԴԵՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ՝ ՈՒՐՈՒԳՎԱՅՈՒՄ

Կառավարությունն իր երեկվա՝ դեկտեմբերի 8-ի նիստում հավանության տվեց 2022 թ. օգոստոսի 19-ին ստորագրված ««Հայաստանի Հանրապետության եւ Ուրուգվայի Արեւելյան Հանրապետության միջեւ դիվանագիտական ներկայացուցչությունների եւ հյուպատոսական հիմնարկների դիվանագիտական, հյուպատոսական, վարչական եւ տեխնիկական անձնակազմի ընտանիքի անդամների կողմից վարձատրվող գործունեություն իրականացնելու մասին» համաձայնագիրը հաստատելու մասին» ՀՀ նախագահի հրամանագրի նախագծին:

Հիմնավորման համաձայն՝ 2019 թ. օգոստոսից Երեւանում գործում է Ուրուգվայի Արեւելյան Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունը: 2022 թ. օգոստոսի 19-ին Մոնտեվիդեոյում ուրուգվայական կողմին է փոխանցվել Հայաստանի ԱԳՆ հայտագիրը՝ Ուրուգվայում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ դեսպանություն բացելու հայկական կողմի մտադրության մասին: Վերոնշյալ համաձայնագրի նպատակն է բարելավել դիվանագիտական ներկայացուցչությունների եւ հյուպատոսական հիմնարկների անձնակազմի ընտանիքի անդամների աշխատանքային հնարավորությունները:

ՆԻՍՏ

ԶԳՈՒՇԱՑՈՒՄՆԵՐ՝ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎՈՂՆԵՐԻՆ

Գործադիրը փոփոխություն եւ լրացում է կատարել նախկինում ընդունած որոշումներից մեկում՝ շինարարական հրապարակներում առկա իրավիճակի, աշխատանքի անվտանգության, սանիտարահիգիենիկ, տեխնիկական անվտանգության, մթնոլորտային օդի եւ շրջակա միջավայրի աղտոտման խնդիրները համակարգային կարգավորելու անհրաժեշտությունից ելնելով: Ըստ հիմնավորման՝ գործող կարգավորումները պատվիրատուին չեն պարտադրում շինարարական ծրագրերի գնման պայմանագրերում պարտադիր նախատեսել կարգավորումներ շինարարական հրապարակներում առկա իրավիճակի, աշխատանքի անվտանգության, սանիտարահիգիենիկ, տեխնիկական անվտանգության, մթնոլորտային օդի եւ շրջակա միջավայրի աղտոտման նորմերի պահպանման վերաբերյալ: Որոշմամբ առաջարկվում է նշվածը դարձնել որպես պայմանագրերի նախագծերում ներառվող պարտադիր պայման՝ զուգահեռ դրանց խախտման համար պայմանագրերի նախագծերում նախատեսելով նաեւ պատասխանատվություն նախատեսող կարգավորումներ: Ըստ այդմ՝ նախատեսվում է սահմանել, որ շինարարական ծրագրերի գնման դեպքում պայմանագրում (նախագծում) պետք է ներառվեն հետեւյալ պարտադիր պայմանները.

- կապալառուն կնքվելիք պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարում է, իսկ տեխնիկական հսկողություն իրականացնող ընկերությունն այդ աշխատանքների համապատասխանությունը հսկում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական եւ հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին համապատասխան,

- պատվիրատուն շինարարական աշխատանքների եւ տեխնիկական հսկողություն իրականացնող ընկերությունների նկատմամբ կիրառում է պատասխանատվության միջոցներ՝ աշխատանքների կատարման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական եւ հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում՝ շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման եւ անվտանգության տեխնիկայի կանոնների չպահպանման յուրաքանչյուր արձանագրված դեպքի համար: Ընդ որում՝ դեպքերը եւ դրանց ի հայտ գալու պարագայում կիրառվելիք պատասխանատվության միջոցները սահմանվում են սպառիչ եւ առանց երկակի մեկնաբանության հնարավորության,

- գնումների դիմաց վճարումները՝ ներառյալ կանխավճարի հատկացումը, իրականացվում են՝ հաշվի առնելով լիազորված մարմնի կողմից հաստատված պայմանագրի օրինակելի ձեւով նախատեսված պայմանները:

Արդյունքում կկարգավորվեն շինարարական հրապարակներում առկա իրավիճակի, աշխատանքի անվտանգության, սանիտարահիգիենիկ, տեխնիկական անվտանգության, մթնոլորտային օդի եւ շրջակա միջավայրի աղտոտման խնդիրները՝ բացառելով հայեցողական մոտեցումների կիրառումը:

Նիկոլ Փաշինյանը կարեւորել է ընդունված որոշումը եւ նշել է, որ խոսքը շինհրապարակներում ստանդարտներ սահմանելու մասին է: «Այսինքն՝ շինհրապարակն ինչ վիճակում պետք է լինի, այնտեղ աշխատողներն ինչ վիճակում պետք է լինեն, ինչ հագուստ պետք է կրեն, եւ անվտանգության ինչ միջոցներ նախատեսեն: Այստեղ հարցերը բազմաշերտ են: Մենք տեսանք, որ Երեւանում փոշու ինչպիսի աննախադեպ մակարդակ կա: Շինարարության ծավալները, այո՛, շատ մեծ թափ են հավաքել, բայց, մյուս կողմից, մենք անընդհատ այդ ահազանգերը ստանում ենք եւ տեսնում ենք նաեւ, որ փոշով աղտոտվածության շատ բարձր ցուցանիշներ են արձանագրվել Երեւանում: Սրա պատճառներից մեկն այն է, որ շինհրապարակներում ստանդարտները չեն պահպանվում: Մենք պետք է այս հարցում լինենք հետեւողական:

Մյուս կողմից՝ շինհրապարակն ինչ վիճակում պետք է լինի, եւ նաեւ այնտեղ աշխատողներն ինչ տեսք պետք է ունենան, եւ շինհրապարակն ինչպես պետք է տարանջատվի մնացած քաղաքացիների առօրյա կյանքից. սրանք բոլորը շատ կարեւոր հարցեր են եւ ունեն եւ՛ անվտանգային, եւ՛, արդեն ասացի, բնապահպանական, եւ՛ էսթետիկ, եւ՛ սոցիալ-հոգեբանական նշանակություն: Կարող է նույնիսկ հարց հնչել՝ արդյոք մենք չափից ավելի ժամանակ եւ ուշադրություն չե՞նք տրամադրում այս՝ մեր ընդհանուր օրակարգի մեջ փոքր թվացող հարցին: Բայց, իմ կարծիքով, նախկինում սրա մասին բազմիցս խոսել ենք, սա, փոխաբերական իմաստով, ԴՆԹ մակարդակի խնդիր է. ԴՆԹ մակարդակի խնդիրներում շեղումները հետագա պրոցեսներում շղթայական մեծ եւ տեսանելի հետեւանքների են բերում: Եվ ես կարծում եմ, որ, այո, մենք բոլոր մակարդակներում մեր երկրում պետք է ստանդարտները սահմանենք եւ ոչ միայն սահմանենք, այլեւ հետեւողական լինենք այդ ստանդարտների իրականացման, ներդրման եւ պահպանման առումով: Այդ առումով այն շատ եմ կարեւորում եւ կարեւորում եմ, որ մենք հետեւողական լինենք, ոչ թե մեկ որոշում ընդունենք, ասենք՝ մենք մեր անելիքն արեցինք, այլ հետագայում նաեւ տեսնենք՝ այդ որոշումներն ինչպես են աշխատում, աշխատում են, թե չեն աշխատում: Եթե չեն աշխատում կամ լավ չեն աշխատում, պետք է դրանք լավարկենք եւ շարունակենք աշխատել այդ ուղղություններով»,- ընդգծել է գործադիրի ղեկավարը:

ԼԱՐՍԻ ԱՆՑԱԿԵՏ

ՆՈՐ ԽՆԴԻՐՆԵՐ ԵՆ ԱՌԱՋ ԵԿԵԼ

Դեպի Լարսի անցակետ գնացող հայ բեռնատար մեքենաների վարորդներին հաջողվել է շրջանցել Թբիլիսիի շրջանցիկ ճանապարհը:

Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցության պատգամավոր Գառնիկ Դանիելյանն ArmLur.am-ի հետ զրույցում նշում է, որ բեռնատարները մոտ 4-5 օր առաջ կարողացել են Լարս հասնել, բայց երկու օր է, ինչ նոր խնդիրներ են առաջ եկել: Պատգամավորի փոխանցմամբ՝ Լարսի անցակետում բեռնատարների կուտակումներ են ոչ միայն Վրաստանից դուրս եկողների, այլեւ վերադարձողների համար: Ու վարորդները, փաստորեն, թե՛ գնալիս, թե՛ հետդարձին անցակետում ստիպված են լինում օրեր անցկացնել: Ինչ վերաբերում է հայաստանյան իշխանությունների ու կառավարիչների քայլերին՝ օգնելու համար Լարսի անցակետում խցանման մեջ մնացած մեր հայրանկիցներին, ապա, Դանիելյանի գնահատմամբ, եթե անգամ դրանք կան, ու ինչ-ինչ քայլեր արվում են, միանշանակ, բավարար չեն: Հիշեցնենք, որ Լարսի անցակետը հատել փորձող որոշ բեռնատարներ նոյեմբերի սկզբից են Վրաստանի տարածքում: Այժմ, փաստորեն, թեեւ Լարսի անցակետի թողունակությունը փոքր-ինչ շատացել է, բայց խնդիրն ամբողջությամբ չի լուծվել:

ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ՀԻԱՍԹԱՓՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՐՀԻ ՉԵՄՊԻՈՆԻՆ ՉԵՆ ԴԻՄԱՎՈՐԵԼ

2022 թվականի բռնցքամարտի աշխարհի ու Եվրոպայի չեմպիոն Էրիկ Իսրայելյանին մոտ տասը տարի է, ոչ միայն պատշաճ եւ չեմպիոնին հարիր ձեւով չեն դիմավորել հայրենիքում, այլ նաեւ գնահատանքի եւ շնորհավորական խոսքեր չեն եղել կառավարության, ԿԳՄՍ նախարարի եւ Հայաստանի բռնցքամարտի ֆեդերացիայի կողմից, ինչն էլ մեծ հիասթափություն եւ վրդովմունք է պատճառել մարզիկին:

«Ոնց հասկացա, ձեզ համար բռնցքամարտի Եվրոպայի եւ աշխարհի չեմպիոնի տիտղոսը 0-է: Եթե էդպես է, էլ ես Հայաստանի եռագույնը չեմ բարձրացնի: Ես միշտ ուզեցել եմ, որ հայ ազգիս ուրախացնեմ, բայց եթե ես չեմ գնահատվում, ես կբարձրացնեմ այլ երկրի դրոշ...»,- գրել էր Էրիկ Իսրայելյանը:

Այս առնչությամբ ArmLur.am-ը զրուցեց նաեւ ՀՀ բռնցքամարտի ֆեդերացիայի մամուլի քարտուղար Արամ Մանուկյանի հետ, որը վստահեցրեց, որ մարզիկին օդանավակայանում ֆեդերացիան դիմավորել է ծաղկե դափնիներով:

Իսկ, ահա, երբ դիմեցինք ԿԳՄՍ նախարարություն, մեզ ասացին, որ որոշակի ժամանակ է հարկավոր, որպեսզի պատասխանեն մեր հարցադրմանը, թե ինչն է եղել մարզիկին չդիմավորելու պատճառը: Իսկ ավելի ուշ մեզ տեղեկացրին, որ այսօր սպասվում է ԿԳՄՍ փոխնախարար Կարեն Գիլոյանի մոտ հանդիպում բռնցքամարտի աշխարհի ու Եվրոպայի չեմպիոն Էրիկ Իսրայելյանի հետ:

Այսպիսով, ստացվում է, որ մինչեւ մարզիկները չաղաղակեն իրենց չգնահատելու փաստը, եւ լրատվամիջոցները չբարձրաձայնեն խնդիրը, ԿԳՄՍ նախարարությունն այդպես էլ ոչինչ չի անի:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԴԱՎԱՐ

Ո՞ՒՐ ԵՆ ԿՈՐԵԼ ԻՆԳԱ ԵՎ ԱՆՈՒՇ ԱՐՇԱԿՅԱՆՆԵՐԸ

Ո՞ւր են կորել երգչուհիներ Ինգա եւ Անուշ Արշակյանները. այս հարցն այսօր հետաքրքրում է հանրության մեծամասնությանը: Արշակյան քույրերն արդեն մի քանի տարի է, ինչ դադարել են ստեղծագործել: Վերջին տեսահոլովակը՝ «Աղրելու աղրիլ» երգը՝ նվիրված Ցեղասպանության զոհերի հիշատակին, քույրերը ներկայացրել են 2015 թվականին:

Նշենք, որ Ինգա եւ Անուշ քույրերը հայկական շոուբիզնեսում այն եզակի երգչուհիներից են, որոնք ունեն իրենց բնորոշ գույն ու երանգ:

Արշակյան քույրերից Ինգա Արշակյանն ամուսնացել է, մշտական բնակություն հաստատել ԱՄՆ-ում, իսկ Անուշ Արշակյանից որեւէ տեղեկություն չկա, քանի որ քույրերը պասիվ են նաեւ սոցիալական հարթակներում:

Հիշեցնենք, որ 2009 թվականին «Եվրատեսիլ» միջազգային մրցույթում Հայաստանը ներկայացրել են Ինգա եւ Անուշ Արշակյանները:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԵՎՍ ՄԵԿ ԿՈՐՈՒՍՏ

Ֆուտբոլի Պորտուգալիայի հավաքականը եւս մեկ կադրային կորուստ ունի աշխարհի առաջնության քառորդ եզրափակիչից առաջ: Կիսապաշտպան Դանիլու Պերեյրան վնասվածքի պատճառով չի կարողանա շարունակել մրցելույթն աշխարհի առաջնությունում:

Նա կվերադառնա փարիզյան ՊՍԺ եւ կանցնի վերականգնողական փուլ: Աշխարհի առաջնությունում վնասվածք էր ստացել նաեւ պորտուգալացի պաշտպան Նունու Մենդեշը, որը նույնպես կվերադառնա ՊՍԺ: Աշխարհի առաջնության քառորդ եզրափակիչի Մարոկկո - Պորտուգալիա հանդիպումը տեղի կունենա դեկտեմբերի 10-ին:

ՏԵՂԱՓՈԽՎԵԼ Է ՊՈՐՏՈՒԳԱԼԻԱ

55-ամյա ճապոնացի ֆուտբոլիստ Կաձույոսի Միուրան ճապոնական «Սուձուկայից» տեղափոխվել է Պորտուգալիայի երկրորդ դիվիզիոնը ներկայացնող «Օլիվեյրենս»: Նա ավագագույն պրոֆեսիոնալ ֆուտբոլիստն է պատմության մեջ: Առաջին պրոֆեսիոնալ հանդիպումը Միուրան անցկացրել է 1986 թվականին բրազիլական «Սանտոսում»: Նա հանդես է եկել Բրազիլիայում, Ճապոնիայում, Իտալիայում, Խորվաթիայում եւ Ավստրալիայում: 2021-ին Միուրան մասնակցել է Ճապոնիայի առաջնության մեկ հանդիպման:

ԹԻՄՈՒՄ ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ ԿԱ

Աշխարհի առաջնության քառորդ եզրափակիչից առաջ Եվրոպայի փոխչեմպիոն Անգլիայի հավաքականի եւ «Մանչեսթեր Յունայթեդի» պաշտպան Հարի Մագուայրը խոսել է անգլիացի Գարեթ Սաութգեյթի գլխավորած թիմի տրամադրվածության մասին:

«Անգլիայի հավաքականում կա վստահություն, որ մենք պետք է հաղթենք այս մրցաշարում: Դա մտածողության լավ փոփոխություն է: Գիտակցում ենք, թե ինչքան բարդ խնդիր է աշխարհի գավաթը նվաճելը: Կա եւս հինգ կամ վեց թիմ այդպիսի հավատով: Հիմա մենք հավատում ենք մեր հաղթանակին»,- ասել է Մագուայրը:

ԿՈՉ՝ ՀՐԵԱՆԵՐԻՆ

Ամերիկացի ռեփ կատարող Քանյե Ուեսթը հրեաներին կոչ է արել ներել նացիստ դիկտատոր Ադոլֆ Հիտլերին: Ծայրահեղ աջ ակտիվիստ եւ սյունակագիր Գեւին Մաքիննեսին տված հարցազրույցի ընթացքում Ուեսթը մատնանշել է, որ հրեաները չպետք է դատապարտեն իր տեսակետները: «Հրեաները չեն կարող ասել ում կարող եմ սիրել եւ ում ո՛չ: Դու չես կարող քո ցավը պարտադրել բոլորին: Հրեա ժողովուրդը պետք է ների Հիտլերին»,- ասել է արտիստը: Նա հրեաներին մեղադրել է 3-րդ Ռեյխի ֆյուրերի հեղինակությունը գցելու համար, քանի որ վրդովված էին, որ «Հիտլերն իրենց վտարել էր երկրից»: Արտիստը կրկնել է նաեւ իր նախկին պնդումն այն մասին, որ լրատվամիջոցների մեծ մասը, ինչպես նաեւ բանկերը, անշարժ գույքը եւ առեւտրի կենտրոնները վերահսկվում են հրեաների կողմից:

● *Դեկտեմբերի 10-ին «Գոյ» թատրոնում տեղի կունենա «Օտարը» թատերական ներկայացումը: Տոմսերի արժեքը՝2000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս է կատարվում պետական անտառներում կամ անտառային հողերում անտառային տնտեսության վարումը:

Համիկ Կիրակոսյան (48 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Մինչեւ մեկ տարի ժամկետով պետական անտառները կամ անտառային հողերը օգտագործման տրամադրելու դեպքում անտառային տնտեսության վարումն իրականացնում է սեփականատերը: Մեկ տարուց ավելի ժամկետով վարձակալության պայմանագրի կնքման դեպքում վարձակալը պարտավոր է վարել անտառային տնտեսությունը եւ կրել այն վարելու ծախսերը:

Անտառային տնտեսություն վարող վարձակալն իրավունք ունի կառուցելու ժամանակավոր շինություններ, իրականացնելու անտառօգտագործման այն տեսակները, որոնք նախատեսված են պայմանագրով:

ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Վարձակալի կողմից ժամանակավոր շինությունների կառուցումը թույլատրվում է վարձակալության պայմանագրով նախատեսված դեպքերում: Վարձակալի կառուցած ժամանակավոր շինությունները վարձակալության պայմանագրի ավարտից հետո վարձակալի միջոցներով ենթակա են քանդման, եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ: Դրանց արժեքը փոխհատուցման ենթակա չէ: Վարձակալի կառուցած շինությունները փոխադարձ համաձայնությամբ կարող են հանձնվել անտառային հողերի սեփականատիրոջը:

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Թոռներին պահելու՝ պապերի եւ տատերի պարտականությունը:

Մուրադ Մարգարյան (35 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Օգնության կարիք ունեցող անչափահաս թոռներն իրենց ծնողներից ապրուստի միջոց ստանալու անհնարինության դեպքում անհրաժեշտ միջոցներ ունեցող իրենց պապերից ու տատերից դատական կարգով ալիմենտ ստանալու իրավունք ունեն: Նույնպիսի իրավունք տրվում է օգնության կարիք ունեցող չափահաս անաշխատունակ թոռներին, եթե նրանք չեն կարող ապրուստի միջոց ստանալ իրենց ամուսիններից (նախկին ամուսիններից) կամ ծնողներից:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Օգնության կարիք ունեցող անաշխատունակ պապերը եւ տատերն իրենց չափահաս աշխատունակ զավակներից կամ ամուսնուց (նախկին ամուսնուց) ապրուստի միջոց ստանալու անհնարինության դեպքում անհրաժեշտ միջոցներ ունեցող իրենց չափահաս աշխատունակ թոռներից դատական կարգով ալիմենտ ստանալու իրավունք ունեն:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից



Կառավարությունն իր երեկվա՝ դեկտեմբերի 8-ի նիստում սահմանեց Մաքսային մարմնի հանրային ծառայողի համազգեստի ձեւը: Վերջին անգամ մաքսային ծառայության համազգեստի ձեւը թարմացվել է ՀՀ կառավարության 2020 թվականի հուլիսի 9-ի որոշմամբ, ուստի անհրաժեշտություն է առաջացել մաքսային ծառայության համազգեստի ձեւը արդիականացնել՝ ելնելով ինչպես արտաքին տեսքի, այնպես էլ օգտագործվող նյութերի եւ ֆունկցիոնալության բարելավման անհրաժեշտությունից:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **8.12.2022**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: